

# ՏԱՆԵՐԺԱԿԱՆԱՐԱՆ



## ՀԱՆԴԻՍ ԿԻՍԵՄՍԵԱՅ

ՎԻՊԱՍԱՆԱԿԱՆ, ԱՐՐԻԵՍՏԻՑ ԵՒ ԳԻՏՈՒԹԵՅՆՑ, ՆՈՐԵՆՈՒԿԻ ԵՒ ԶՈՒՍՐՇԱՆԼԵՅՑ.

ԱՌԱՋԻՆ ՇՐՋԱՆ

Ա. ՏԱՐԻ.

1862 ՅՈՒՆԻՈՒՐ 15

ԳԻՒ 2

### ԲՅՈՋԷԼԻՒՆ ՏՐ ԳԱՐՎԷԼԼԱ

ՎԻՊԱՍԱՆԱՆՈՒԹԻՒՆ ՄԻ ԳԱՂՉԻՈՑ ՀԻՆ ԴԵՊՅԵՐՈՒՆ ՎՐԱՅ



բող էր: Իւր ձիւրքերն էին բաղկի զըրութեամբ բոան հարուածներ տալ, և ըմբշամարտութիւններ ընել, որոնց համար մրցանակներ ընդունած էր:

Տարմնակ բարձրահասակ և երեւելի պաշտօնակալ անձ մի էր, որ իր ծաղիկ հասակը անցած, երիտասարդութեան եռանդը մարած, ու աղնուակնի երևոյթ մը չունենալով, Փարիզի նազելի տիկնանց սէգ և փափհասուն սիրտերը իրեն գրաւելու անկարող էր:

Իւր հինաւուրց տարիքը ամեն բան տղեղացուցիչ էր. իւր առատ մազերը որ երբեմն իր գէմքը կը զարդարէին, բայց այժմ զայն կ'այլալէին. իր բնութիւնը կոշտ և ամարդի, կենցաղավարութիւնը դէս և իր խօսելու կերպը համառօտ ու կծու էր. կարճ խօսելով զարմանալի հրէշ մի էր, որ բոլոր իր ծամանակները պատերազմի, դաշտերու ղինուորական հրահանգաց կամ պաշարման երազներ ցնորելով անցուցեր էր: Բայց թէ ի՞նչ ճակատադրին, կամ երկնից հրաշալի ազգամամբ և կամ թէ ըստ գիտաց, չորցած տերեւը (այսինքն Տարմնակ պաշտօնակալը) իրեն ամուսին մը կ'որոշէ, և իւր այս դիտաւորութիւնը կատարելու համար, իր գաղտնիքը կը յայտնէ ոչ այն աղջկան, որուն գեղեցիկութիւնը իր դրահներուն մէջ փակուած կարծրացեալ սիրտը կը թափանցէր, այլ անոր հօրը, որ իր զինուորակից ընկերը, իրեն սէս բերած, և ամարդի մէկն էր: Այս երկուքին մէջ ամուսնութեան դաշինքը կը կապուի, և կուսուհայն Բողէրա Տը Գարշինքը կը կապուի:

վելա հայրը մեռնելու վայրկեանները զան իւր աղջկան կը յայտնէ յորդորելով որ Տարմէնակին ձեռքը ընդունի :

Հրաշագեղ կոմսուհին իր հօրմէն զրկուելով՝ պաշտօնակալին քաղաքը կը տարուի , ուր յատկապէս Սպանիայէն բերուած Վարդարիտ անուն պահպան և դաստիարակ տիկնոջ մը մշտնջենական ներկայութեամբը հսկողութիւն կ'ըլլայ անոր վրայ : Խեղճ կոմսուհին արդէլանի մէջ , սուր հսկողութեան , բռնութեան , և ամբաստանող պարիսպներու տակ փակուած , որոնք անմատչելի էին մինչև անդամ կեանքերնին զոհելու պատրաստ արիասիրտ դիւցազնաց : Պաշտօնակալին պահպանողական խըստութիւնը այնքան սաստիկ էր աղջկան վրայ , որ անկարելի էր անոր հետ հաղորդակցութիւն ընելը : Սակայն իրերուն վիճակը անանկ բերաւ , ( հիանալի դէպք ) , որ կոմսուհի Րօզէլիան արդէն առանց իր հօրը զիտութեան և խորհրդակցութեանը , աղնուական և շնորհատեսիլ երիտասարդի մը սիրոյն յարած էր , որ Սալոյայի արքունեացը կը վերաբերէր , վեցերորդ Վարդլուսին սենեկապետին որդին : Բաղմաթիւ անձեր անոր սիրաը գրաւելու համար պատրաստ էին իրենց կեանքը զոհել . բայց անոնց մէջ միայն Սալոյային կարացեր է պարծենալ անոր լուսասփիւռ ժպիտը վայելելու : Տարմէնակ պաշտօնակալը գրեթէ ամեն կէս օրէ ետքը պաշտօնական այցելութիւն մի կ'ընէր իր որսը եղած կոմսուհւոյն կայարանը՝ և իր աղերսալի խօսքերը գեղեցիկահիւս ոճով անոր կը մատուցանէր . բայց իր սիրոյն թախանձանքները և հրապուրիչ խօսքերը ամենեւին աղբուրութիւն մը չէին ընէր աղնիւ կոմսուհւոյն փափկասուն սիրտը գրաւելու :

Օր մը ձեր տարփածուն այցելութիւն ընելով իր սիրոյն առարկայ շնորհագեղ աղջկան , զան քընացած կը դանայ այցելութեան սենեակին մէկ կողմը դրուած նստարանին վրայ . հինաուուրց մեքենան անոր մօտենալով , ծնկան վրայ կ'ընթաց՝ դողդոջուն ձեռքը կը վերցընէ այն սպիտակափայլ այտերուն վրայ ինկած գեղեցիկ մազերը , ու իր զազրալի և մազտեալ շրթունքը անոր մօտեցնելով համբոյր մը կը յարէ , որով կրնար զովայնեւ իր ձերութեան յազուրդը : “ Ո՛հ , սիրելի Վարդլուս , դուն ես որ ինձ կը մօտենաս ” , կ'ըսէ նազելի կոմսուհին գեռ անոր վրայ տեսած երազը շարունակելով :

Տարմէնակ յանկարծ ոտք կ'ելլէ կայծակի հարուած մի ընդունածի պէս . “ Սիրահար ունի ուրեմն , հա՛ ” , կ'ըսէ , — անոր անունը իր բերանը , — և պատկերը իր սրտին մէջ ” :


Ապետը քինախնդիր ողուով , և վրէժխնդրութեամբ դուրս կը ցաթիկէ , և պահանորդ կինը կը կռչէ . “ Ե՛կ հոս , Սպանիացի վհուկ թեւագիր , կ'ըսէ բռնութեամբ անոր ձեռքը յափշտակելով . ո՛վ է այդ Վարդլուսը , պատմէ ինձ :

— Տէր , ո՛վ ինչ ըսաւ քեզի Վարդլուսին վրայ , կը պատասխանէ պահանորդ տիկինը , — անըզդուութեամբ յայտնելով իր գիտակցութիւնը յանկարծական երկիւղով :

— Սիրահար կայ ուրեմն , կը դռչէ սաստիկ բարկութեամբ ձերունին , ապիրատ , դուն նենդեցիր իմ շահս և քու օգուտդ , սիրականը իմ բայտիս յութեանս ատեն հոս կու գայ եղէր . — դիտեմ ո՛վ է : Իմ կինս ներս կ'ընդունի իր սիրահարը , հա՛ , — խօսէ շուտով , եթէ ոչ՝ պիտի ճաշակես սանդաղոյնին ծայրը :

Վարդարիտ սաստիկութեամբ մը անոր ձեռքը թոթովելով , գիմացի կողմը եղած նստարանին վրայ կը նստի , և զայրացմամբ կըսէ . “ Սպանիէ՛ զիս . ահա պատրաստ եմ , ես չիսլիտի ըսեմ խօսք մի , չեմ կրնար մատնել իմ անուշիկ , և քաղցրարարոյ տիկինս ” :

Տարմէնակ կէս մը քաշած իր թուրը , կուզէ ինքզինքն և կամ իր որսը սպաննել , բայց սակաւ ինչ մեղմելով իր կերքը , և Վարդարիտին գլխուն դառն անէծք թափելով , կը դարձունէ իր թուրը վերստին իր տեղը : Աս միջոցին Րօզէլիան ներս կը մտնէ . հրաշագեղ տիրուհին գեռ նոր արթնցած իր կարճատե քունէն՝ բազմոցին վրայ կը նստի իւր հրաշակերտ բազուկը տարածելով , որուն գեղեցկութեան լուսասփիւռ ճառագայթները բոլորաձև սենեակը կը պայծառացնէր : “ Բարի և աղնիւ տիկին , կ'ըսէ Տարմէնակ հենդնօրէն , թէ որ երեսասարդ շրթունքները կը ճառատեն քնոյ մէջ , ձեր ականջներն ալ յարմար են անոնց նշանակութիւնը հասկնալ արթնութեան մէջ : Ո՛վ է այդ Վարդլուսը որոյ վրայ դուն կ'երազես ամեն օր : — Վարդլուս ” , կը դռչէ աղնիւ կոմսուհին , իր երեսը ծածկելով և գունաթափ լինելով : — Ո՛հ , տիրուհիս , կ'ըսէ ասպետը , դուն Հէնրի Տարմէնակին վրայ չէիր երազեր , այն միակ անձին , որոյ վերայ դուն իրաունք ունիս խորհիլ , սիրելի տիկին . խոստովանելու ձանձրութեանէն ազատելով կ'ըսեմ քեզ որ քու սիրականդ ուրիշ մէկը չէ , եթէ ոչ Սալոյայի Վարդլուսը , սենեկապետին որդին : — Չէ՛ չէ՛ , տէր իմ , կըսէ Րօզէլիան մեռելի պէս դուռնաթափ լինելով , և սոսկալով , քու կասկածներդ անհիմն են , սխալած ես գուշակութեանդ մէջ , ես երբէք չեմ սիրեր Սալոյայի Վարդլուսը , և ան




383.

Imp. Marton.

*No peut être reproduit.*

ՅԱՒԵՐԲԱՆՈՐԻ  
1862 ՅՈՒՆՈՒՆ 15



բնաւ չի յանդգնեցաւ ինձ մօտենալ : — Բարի , կըսէ Տարմէնակ , բայց ես անոր համետեալ ձին իմ ապարանիս գաւիթը տեսայ , — քանիցս եկերէ , բայց ինչ եղանակով չեմ կրնար ճիշդ ըսել , բայց յանուն ելկնից երդում կ'ընեմ՝ պէտք ես խոստովանիլ , եթէ ոչ՝ անոր պէս , կամ անկէ վաթար պիտի ըլլայ քու ճակատագիրդ : — Ո՛հ , տէր իմ , կը գոչէ Բողէլիա մահուան երկիւղը կրեալ , ինայէ ինձ , ներէ ինձ » :

Տարմէնակ կը զօրէ ինքզինքը և չափաւորելով իւր ցասումը կ'ըսէ : « Ըղնիւ տիկին , ես զքեզ վընասել և կամ վիրաւորել չուզեցի , բայց՝ թէ որ իմ ոտոք ախոյեանս աղէկ մը դիտած ըլլար իր վիճակը՝ չի պիտի յանդգնէր ասանկ անօրէն գործի մի ձեռնամուխ ըլլալ . անիկայ պէտքէ ամէնէն հզօր պետութիւն և անպիմադրելի թաղաւորներէն մէկը ըլլայ , որ կը համարձակի մտնել իմ խոստացեալ տիկնոջս և իմ մէջս , իսկոյն պիտի սպաննեմ զան իր դահին պատուանդանին առջևը » :

Աս արիական և ոճուազործ նպատակաւ Տարմէնակ դնաց սպասաւորներուն հարցնելու թէ կերպիւ իւրք կրնայ գաղափար մի ստանալ աս ծանրաւ կշիռ գործին որպիսութեան և հանդամանայ վրայ , որով կրնար յատարիծ մի յօրինել իր ստակալն վըրէժինդրութեան թոյնը թափելու :

Ս'նայեալը յաջրէր իրող :

Ա Ր Ո Ւ Ե Ս Տ Ք

ՈՍԿԻԻ ԶՈՒՐ ՇԻՆԵԼՈՒՆ ԿԵՐՊՐ

Ոսկի շուր շինելու համար չորս տեսակ նիւթ պէտք է :

1. տրամ Բեղապ (1) . աս կը շինուի 1 ասիլ չիլիէ , 2 տրամ ասիպ հիպոթիլիէ մէկտեղ խառնելով :
2. Սիանի-ր րը Վէր :
3. Հասարակ աղ :
4. Քարպօնաթ րը Բօլա :

Գործողութիւն :

Առ մաճառ կամ էալը շ ոսկին կամ էյիլիլի , կշտէ և դիր տակը կըր շէլի մը մէջ , և իր ծանրութեան երեք անգամին չափ չեղապ լեցուր ու կրակին վրայ դիր որ տաքնալով լուծուի . թէ որ

(1) Զանազան արհեստից գործողութեան մէջ գործածուած յիւթերէն շատերը , վնասակար թոյներ ըլլալուն , փորձադիրը զգուշանալու է :

չեղապ եփելով ցնդի , ոսկին բոլորովին լուծուելէն ետքը՝ մէջը եղած չեղապը եփելով այնքան ցնդեցնելու է , որ դրուած ոսկին չեղապով մէկտեղ ոսկիին ծանրութեանը չորս անգամը մնայ : Աթէ անանկ պատահի որ չափէն աւելի ցնդի , ցնդածին տեղը չեղապ էվելցնելու է , ասկէ ետքը առ դրած ոսկիիդ 20 անգամը սիանի-ր րը Ֆէր ըսուած դեղին աղը ու ջրի մէջ լուծէ , և լեցուր շէլի մէջ լուծուած ոսկիին վրայ , որ բոլորը դեղեցիկ կանանչ գոյն մը կուսենայ . դիր կրակին վրայ , ու թող որ եփի , եփ ելլելուն պէս՝ կրակէն վար առ ու վրան լեց դրած ոսկիիդ տասը անգամը հասարակ բարակ աղ , ու աղէկ մը չալաւիլ ըրէ մինչև որ բոլոր դրածը լուծուի , նորէն շէլի կրակին վրայ դիր որ սկսի եփիլ , քանի մը ըսպէ ալ ասանկ եփելէն ետքը՝ քիչ քիչ մէջը Բօլա-րը ձգէ , որն որ դրած ոսկիիդ տասն երկու անգամը ըլլալու է . Բօլա-ն ալ դնելէդ ետքը՝ կրակէն վար առ , ու թող որ քիչ մը պաղի , և դրած ոսկիիդ երկու հարիւր անգամը մաքուր ջուր լեց շէլի մէջ , և կէս ժամի չափ եփելէն ետքը՝ վար առ , ու թողթէ անցուր որ կըլլայ դեղին ոսկեղօծելու ջուր :

Գործողութիւն :

Ոսկեղօծել ուզած բանդ աղէկ մը մաքրելէն ետքը , տեղ տեղ իի-լիայի կամ դիւնի կտորվանքներ կպցուր , և անանկ դիր ալըլը ամանի մը մէջ , ու վրան լեցուր վերոյիշեալ ոսկեջուրէն , և մէկ կամ երկու ըսպէ եփելէն ետքը ջուրին մէջէն դուրս հանէ , ու շուտով պաղ ջուրի մէջ խօթելով լուա , քանի անգամ որ ուզես՝ կրկնէ աս գործողութիւնը , որ հասա ոսկի զալաւիլ ըլլայ վրան , և էն ետքը իեպէլի-րով կամ չուխայով շիէ , կուզես նէ մասխալ ըրէ : (կպցուցած կինքիդ տեղերը բիծ մնայ նէ , իեպէլի-րով շիէ հանէ բիծը) :

Ծանօթութիւն :

Վերոյիշեալ ջուրով ոսկեղօծելէն ետքը՝ թէ որ կ'ուզես ոսկիին քիչ մը կարմիր գոյն տալ , ոսկեղօծած բաներդ առ ու հետեւեալ բաղադրութեան մէջ խօթէ :

Առ մեղրամոմ չորս մաս , ձէնկեար ու կեօլ իւրը մէյ մէկ մաս . առաջ մեղրամոմը հալեցուր մէկ ամանի մը մէջ ու վրան լեց ձէնկեարը ու կեօլ իւրէն աղէկ մը ծեծելով փռելէն ետե :

Փայլեցուցած երկաթիկ կամ դոցաստե բաները ոսկեղօծելու կերպը առանց եփելու :

Ս'աճառ կամ էալը շ ոսկիին էյիլիլի իր ծան

բութեանը երեք անգամին շափ ղեղալի մէջ լուծե-  
լէն ետքը՝ տաքցունելով այնքան ցնդեցունելու է  
որ լուծուած ոսկին դեղին աղ մը ձեւանայ, ետքը  
ան լուծուած ոսկին աղը ու էլիէր «ըլֆըրիտ» մէջ լուծե,  
և շէլէի մէջ դիր ու բերանը աղէկ մը գոցե, որ  
չի ցնդի:

Գործարարութիւն

Երբոր կ'ուզես զմեղի, կամ ինչ և իցէ երկաթ  
ոսկեզօծել, ոսկոր դրիչին փետուրը խօթէ աս  
լուծմանը մէջ ու ոսկեզօծելու բանիդ վրայ քսէ.  
քիչ ատենէն կը ցնդի ու ոսկին կը մնայ:

Առնց փրփուրի (մայա) հաց շինե:

8 Տրամ. sesquicarbonate d'ammonia ջրի մէջ  
հալեցուր 2 1/2 օխա ալիւրով շողէ, կնտէ ու ան-  
միջապէս եփէ:

Ուրիշ կերդ մը:

3 Օխայ ալիւրը երկու մասի բաժնէ, մէկ մա-  
սը 16 տրամ bicarbonate de soda ջրով լուծուա-  
ծին հետ խառնէ և միւս մասը 8 տրամ acide muria-  
lique ջրով լուծուածին հետը խառնէ, երկու մասն  
ալ զատ զատ շողէ. մէկզմէկ խառնէ կարելի ե-  
ղածին շափ շուտով և անմիջապէս եփէ:

Ան հացը շատ առողջարար է. և (մայա) փըր-  
փուր չուզեր:

### Շ. Լ. Բ. Ս. Փ. Բ. Ա. Յ.

#### Վ Ե Ն Ն Տ Ի Կ Ի Վ Ը Ճ Ե Ք Ե Կ Ե Ը Ե Ը

Արտանայութիւն (1)

Կրաքիտ . Ատոր դեղը կայ. երկու տարի  
ևս հետս կենցաղավարութիւն ըրէք, ու ետքը կը նա-  
յիք որ դուք ձեր խօսքերուն ձայնը չէք հասկնար:

Անթօնի . Երթաք բարով, կը նայիմ որ այս  
խաղալիկ խօսքերով իս ալ պիտ' ըսկսիք շատախօս  
ընել:

Կրաքիտ . Փառք քեզ Աստուած, ճշմարիտ.  
ինչու որ լուծիւնը՝ չի ծախուելիք աղջկան մ'ու  
եզան չոր լեզուին մէջ գովելի է:

Կրաքիտ և Լօրէնս Իււնէ:

Անթօնի . Սըլըր ըսածները նայեցէք Աս-  
տուած սիրէք:

Պատանի . Կրաքիտն որ յի Կենտրինի մէջ  
եղած մարդոցմէ աւելի անհաստնում ապուռ ճարուռ

(1) Տես թիւ 1.

բաներ զըցողն է, իր տուած իրաւունքները՝ երկու  
քոռ յարգի մէջ խառնուած երկու հունա ցորենի  
կը նմանին, բան չունիս նէ մինչև իրիկու փնտաէ  
որ դանաս, ու դանաս նէ ալ՝ փնտաելու աշխատու-  
թիւնդ իսկ չեն արժեր:

Անթօնի . Բարի. ըսէք նայիմ հիմակ, ինչ  
կերպ տիկին է այն որու քով զազուռի ճամբարգու-  
թիւն մ'ընելու երգում էք ըրեր, ու խօսք—տուիք  
որ այսօր կ'իմացնէք ինձ:

Պատանի . Չէք դիտեր չէ, Անթօնի, որ  
վիճակը որքան պղտիկցաւ զանազան նաւահանգիստ-  
ներու հետ առուտուրս մեծցնել ուզելով ըրած  
փեսաներովս, քան թէ իմ խեղճուկ միջոցներու  
գործերս շարունակելու չի ներածովը. ո՛չ ալ՝ այն-  
պէս բարձր աստիճանէս ինալուս համար կը ցա-  
ւիմ հիմակ, բայց իմ դիւաւոր խնամքս՝ իմ մեծ  
պարտքերէս յաջողութեամբ ազատիլն է, որու մէջ  
ժամանակս՝ պիտո շոյլ բանի մը պէս, իս դրա—  
դրաւ, Անթօնի, ամենէ աւելի ձեզի պարտական  
եմ; ստակ՝ ու սէր, ու ձեր սիրոյն երաշխաւորու-  
թիւնն է, որ բոլոր մէջէ—մէջ գործերուս ու սը-  
ջաձեներուս ծանրութիւնը վրայէս նետելու՝ և բո-  
լոր պարտքերէս ազատ—մնալու յոյսը կուտայ ինձ:

Անթօնի . Կ'աղաչեմ, աղիւս. Պատանի,  
յայտնեցէք ինձի զանոնք, ու թէ որ բանը պատուոյ  
վրայ է նէ՝ հաւաստի—եղիք, որ քսակիս՝ անձիս՝ ու  
բոլոր ընչիցս տէրն էք:

Պատանի . Դպրոց դացած ժամանակներս՝ երբ  
նեա մը կը կորսնցնէի, մէկ միւս մը կ'առնէի ու  
նոյն ուժով մի և նոյն կողմը կը նետէի, ու աւելի  
ուշադրութեամբ անոր ընթացքը գիտելով մէկը  
զտնելու համար փնտրած ատենս, երկուքն ալ վը-  
տանդի մէջ ձգելովս՝ երկուքն ալ կը դանէի, այս  
տղայական փորձառութեանս մէջ—բերելու կը նայիմ:  
Ինչու որ անոր հետեւութիւնը պարզ անմեղութիւն  
մ'է: Ես ձեզ շատ պարտաւոր—մնացած եմ, ու կա-  
մակոր երիտասարդի մը պէս՝ պարտքս կորսնցուցած  
եմ: Բայց թէ որ կը հաճիք, որ ուրիշ նեա մ'ալ  
արձակէք նոյն ճամբով որ առաջին անգամ արձա-  
կեցիք, կասկած չունիմ, որ անոր սլանալը մտադը-  
րութեամբ գիտելէս ետք՝ կամ երկուքն ալ կը դըտ-  
նամ, կամ վերջի աչքէ հանածնիդ նորէն կը բե-  
րեմ ետ—կուտամ ձեզ, ու շնորհակալութեամբ դար-  
ձեալ առջի պարտքովս պարտաւոր կը մնամ:

Անթօնի . Իս աղէկ կը ճանաչէք, ու այդ  
պարագաներով փուճ—տեղ ժամանակ կը կորսնցնէք  
որ իմ սէրս ճանչնաք՝ ու անկասկած, զան վերջին  
ծայրը ատնելովիդ աւելի սիրտս կը վշտացնէք,  
քան թէ բոլոր ունեցածներս վատնելովնիդ ցտցը

նէիք, ուրեմն, ըսէք ինչ կ'ուզէք որ ընեմ, ձեռքէս եկածին շափ ձեր կամքը կատարելու պատրաստ ըլլալն զիտէք, ըսէք ուրեմն նայիմ:

Պատահիս. Պէլմոնթ՝ պինտ հարուստ աղջիկ մը կայ ամուրի, որ պինտ գեղեցիկ է, այնքան որ գեղեցիկ խօսքը իր գեղեցիկութեան նշանակութիւնը չի կրնար սալ, ու հրաշալի առաքինութեանց ալ տէր է: Ըսաջնորդ՝ իր աչքերէն քանի մը յաջող ու անխօսուն պատգամներ ընկալայ, անունը Փորթիա է, ու Պրուտոսի Փորթիա, Կատովնի աղջիկն վար գին չունի: Քոլոր աշխարհք իր ինչ ըլլալը գիտէ, ինչու որ չորս տեսակ հողերը՝ ամեն կողմէ երեւելի տարիաւորներ կը քշեն իւր վրայ, և իր արեւադոյն խոսրոպահներ փունջերը՝ իր ծամելիքներուն վրայ ոսկի գեղման պէս կախուած են, որոնք որ Կողքիսի ծովեզերքը Պէլմոնթ ձեացընելու համար, բազմաթիւ Կատոններ կը յարուցանեն զինք ինչպէս: Ա՛հ, Ընթօնիօս, թէ որ ես ալ անոնց մէկին հետ նախանձորդ ըլլալու միջոցը ձեռք բերէի, մաքիս մէջը այնպէս նախատես գուշակութիւն մը կայ, որ անպատճառ բողբաւոր պիտ' ըլլայի կ'ըսեմ:

Ընթօնիօ. Գիտէք աղէկ՝ որ իմ բոլոր ստացուածքս ծովուն երեսն է, ու հիմա ո՛չ ստակ ունիմ և ոչ զիւրութիւն որ խնայն ձեզ գումար մը տամ, անոր համար, զնայէք, աշխատեցէք նայեցէք իմ անուանս պատուովը Վենետիկի մէջ ինչքան բան կրնաք ձեռք բերել, որ կարող ըլլայ զոնէ ինայողաբար ձեզ մինչև Պէլմոնթ գեղեցիկ Փորթիայի քով տանիլ: Գնայէք, ու ես ալ երթամ խկոյն, նայինք մը կրնանք դա՛նալ ստակ, տարակոյս չունիմ, որ պատիւս և համարումս բան մը ձեռք բերել չեն տար:

Կեւէն:

Տ Ե Ս Ա Ր Ա Ն Բ.

Պէլմոնթ. Փորթիայի տան մէջ սենեակ մը:  
Փորթիա և Ներսա իւր ձեռքն:

Փորթիա. Ճշմարիտ Երբինա, պզտիկ մարմլւնըս այս մեծ աշխարհքէն ձանձրացեր է ալ:

Երբինա. Կրնայիք այդպէս ըլլալ, սիրուն աիկին, թէ որ ձեր զգբախտութիւնները՝ ձեր մեծ հարստութեանց պէս առատ ըլլային, ու այս ալ կայ, որ հոս տեղս առատութեամբ յղփացնող անախորժութիւնները՝ անթութեանէ մեղցնող կարօտութիւններէ աւելի շատ են, պարզ վիճակի մը մէջ կեանք վարելէն աւելի ճշմարիտ երջանկութիւն մը չի կայ եղեր: Ընչափութիւնը՝ ձերմակ մագերով

չուտ մը վրայ կը հասնի, բայց չափաւորութիւնը աւելի երկար կ'ապրի:

Փորթիա. Պատուական ու պինտ դատաւճռական իրաւաբանութիւններ:

Երբինա. Աւելի պատուական կրնան ըլլալ, թէ որ բնուեւելու ըլլան:

Փորթիա. Թէ որ ընելը՝ աղէկն ինչ է այն ընելը զիտնալու պէս զիւրին բան մ'ըլլար, մատուները եկեղեցի կ'ըլլային, ու աղքատաց խըրճիթները՝ իշխաններու պալատ: Աղէկ վարդապետ այն է, որ իր տուած բուն քարոզութիւններուն կը հետեի, աւելի զիւրութեամբ կրնամ քան մարդոց օգտակար բան մը սորվեցնել, քան թէ այն քաննէն մէկն ըլլալ, որ իմ սորվեցուցածին հետեւիմ: Ուղեղը՝ արիւնին համար օրէնք կրնայ հաստատել, բայց տաք խոսնուածք մը՝ յորտ հրամանի մը վրայէն կը ցաթիկէ, աս իրիտատարողութիւնը ասանկ մէկ խենթ նապատակ մըն է, որ հաշմանդամ խրատուց լարերուն վրայէն կ'ոտանուանդին կ'անցնի: Բայց աս իրաւաբանութիւնս՝ Էրիկ մ'ընտրելու եղանակ մը չի սորվեցնէր ինձ, — մեղք ինձի, որ ընտրել խօսքը կ'ըսեմ, ոչ ախորժածս կրնամ ընտրել, և ոչ չախորժածս կրնամ չի հանիլ. աս իմ ասանկ կ'ըլլայ մեռած հօր կտակին տակ ընկճած կենդանի աղջկան մը կամքը (1): — Գըժնդակ բան չէ՛, Երբինա, որ մէկը չեմ կրնար ընտրել, ու մէկն ալ չեմ կրնար մերժել:

Շարժայիլ:

Գ Ե Բ Ե Ս Ս Ե Ն Ի Ն Ի Ի Մ Ը Ե Գ Ե Ս Թ Ն Ո Ր Կ Ե Ը

Փարիզի թատրոններուն մէկուն մէջ գեղեցիկ բայց անփորձ աղջիկ մը. առաջին անգամ խաղալուն՝ իր շնորհալի երևոյթը ու գեղեցիկութիւնը զարմացմամբ հրապուրեց ամենուն սիրտը, անանկ որ անօրէնը տարուան մը համար դաշինք ըրաւ աղջկանը հետ, և խոստացաւ որ զան աղէկ վարձատրէ, որով կարող ըլլայ իւր մայրը սնուցանելու, քանզի անոր անբոնտը բոլորովին իր զաւկէն կախում ունէր:

Նոյն ատենի սովորութեանը համեմատ՝ դաշանց վրայ աս ալ աւելցուցին, զի զոմէն ով որ խօսքէն գառնայ՝ տասը հազար ֆրանկ տուգանք տայ:

Աղջիկը իր խոսամունքէն դառնալու բնաւ միտք չունենալով՝ կանոնաւոր կերպիւ իր պարտաւորութիւնը կը կատարէ:

(1) Կասկ և խափ մի և նոյն արաստնութիւնն ունին Անգլ մէջ. ծ. Թ.:

Օր մը դերասանուհին տնօրէնին սենեակը կը մտնէ և կը ծանուցանէ թէ՛ թատրոնը ձղեւ կ'ուզէ :

“ Ի՞նչ, կ'ըսէ տնօրէնը . այդ փոփոխամտութեան ամենեւին չէի սպասեր :

— Ճշմարիտ , տէր իմ , փոփոխամտութիւն չէ :

— Ուրեմն միտքդ ուրիշի հետ միաբանի՞լ է :

— Այո՛ , տէր իմ , անանկ մէկու մը հետ որ չեմ կրնար մերժել . երեւի երիտասարդ մը կ'ուզէ ամուսնանալ ինծի հետ :

— Աղէկ գործ մ'է այդ , որովհետեւ ամուսնութիւն կայ խնդիրին մէջ :

— Այո՛ , բոլոր կենացս մէջ երջանիկ պիտի ըլլամ :

— Ուրեմն մի ուշացուներ , կարգուէ :

— Բայց առաջարկող անձը չուզեր որ իր կինը թատրոնը խողայ :

— Այդ ինչ անխոհեմ իրաւունք մ'է : Անոր արհեստը ինչ է :

— Վաճառականի մը քով դրազիր , բայց միտք ունի խնուած բանալ , և կ'ուզէ որ ես ալ իրեն հետ աշխատիմ :

— Միքի զաւակս , գեղեցիկ նոր խողարկուութիւն մը ընդունեցի , կ'ուզեմ որ քու մասոգ սերտես :

— Ուրեմն , տէր իմ , պիտի չթողուս որ ազատ ըլլամ :

— Պէտք է խորհիմ ատոր վրայօք . սակայն քու ձեռքդ է դաշնագրութիւնը եղծելը , տուգանքը վճարելուդ պէս կը ըմայ բանը :

— Տասը հազար ֆրանկ խիստ շատ է :

— Ստորագրած ամենագ շատ քիչ էր , բայց հիմայ քու ծառայութիւնդ աւելի կ'արժէ :

— Աւա՛ղ , ամուսնանալէս ետ պիտի մնամ” , կ'ըսէ խեղճ աղջիկը աչքերէն գետի պէս արտասուք թափելով , և յուսահատութեամբ կը թողուս սենեակը կ'երթայ :

Աւթ օր ետքը՝ տնօրէնը իր սենեակին մէջ կրակարանին առջին նստած կ'աշխատէր կրակ վառելու , բայց չկրցեր էր յաջողել :

Աս միջոցին դերասանուհին ներս կը մտնէ :

“ Դ՛նն ես , կ'ըսէ Տնօրէնը , կարծեմ խաղալու համար եկար :

— Չէ՛ , տէր իմ , թատրոնը թողելու համար :

— Ուրեմն միտքդ դրի որ թատրոնը թողուս :

— Տուգանքը բերի :

— Տասը հազար ֆրանկը :

— Այո՛ , ահա գումարը :

— Ի՞նչպէս կրցար ստանալ այդչափ ստակը :

— Կշանածս տուա :

— Հարուստ մէկն է ատիկայ :

— Աս տասը հազար ֆրանկը դրեթէ բոլոր կենաց մէջ վաստակածն է , սակայն ինք կ'ըսէ թէ .

“ Ի՞նչ կ'ըլլայ , դուցէ փոխ առնելով կրնամ խաճուած մի բանալ” :

— Թե՛ որ իր համայն կենաց մէջ դժուարութեամբ վաստակածը ձեռքէն առնես՝ պիտի ստիպես զինքը թշուառութեան մէջ իյնալու , և պատճառ պիտի ըլլաս անոր կործանմանը :

— Կ'աղաչեմ , տէր իմ , կ'աղաչեմ անդթութեամբ մի խօսիր :

— Կը կարծես որ ատ կերպ միաւորութեամբ սպերջանիկ պիտի չըլլա՞ք : Աս աս ստակը . և ետ տուր անոր , և թէ՛ որ հաստատ որոշած ես թատրոնը թողելու , քեզի պարզ կերպ մը ցուցունեմ , որով ստակէ ալ չես ելլեր : Ա՛ս սա թուղթը , և հաճէ կրակարանին մէջ խօթել , որով կրակը արծարծի” :

Աս ըսելով ծրար մի թուղթ կու տայ անոր , որնոր աղջիկը ծխոտ փայտերուն մէջ կը նետէ , ու վառարանին մէջի փայտերը կ'սկսին բոցավառիլ :

“ Գիտես ատ ինչ թուղթ էր , կ'ըսէ տնօրէնը , քու ստորագրած դաշնագրութիւնդ էր . ասկէ ետքը ամենեւին տուգանք մը չեմ կրնար պահանջել քեզմէ . գնա՛ , զաւակս , ամուսնացիր : Աղէկ գործածէ քու փոքր դրամագլուխդ , ու երջանիկ եղի՛ր” :

Աս առատաձեռն գործին վրայ մատղաշ դերասանուհին իր երախտագիտութիւնը կը յայտնէ անոր արտասուած խօսք :

“ Երախտագիտութեան վրայօք մի խօսիր ինձ , կը պատասխանէ տնօրէնը . երկուքնիս ալ պարտքէ ազատած ենք , մինչև հիմա պարապ տեղը աշխատեցայ ատ յամառ կրակը վառելու , և չկրցայ , բայց քու դաշնագրութեան թղթերդ մէջը նետելուդ պէս , իսկոյն սկսաւ բռնկիլ , դուն շնորհակալ ես ինձմէ որ ազատեցի զքեզ , ու ես շնորհակալ եմ քեզմէ որ կրակս վառեցիր :

ՆՈՐԵԼՈՒԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Թաւիշի (ցասիֆի) բողա ձեռման Կ Կտերոյ :

Առաջին Ֆիսպանի Ղարնիճէնիլը նախ երկու ժապաւէններէ կըլլայ բաց ֆիշի գոյնով , բոլոր կողմէն սև և շատ նեղ Բանիէլայէ մը շրջապատած , երկու ուրիշ նման ժապաւէններ կան , առաջինը , մէկ կողմը դրուած բաւական լայն և սև Բանիէլայէ շրջապատած է . երկրորդը , միւս կողմը դրուած սև և նեղ Բանիէլայէ , շրբորդ ժապաւէնը նմանապէս

սեւ եւ նեղ թանկէլայե շրջապատած է եւ ստոնցմէ ուրիշ երկու ժապաւէններ մի եւ նոյն շարժիճէնիով վերը նկարածնուս վրայ դրուած են, ուստի ընդ ամենը վեց շաբաթե ժապաւէն պիտի ըլլայ :

Վաթիֆէ ճերմակ կէտերով երկրորդ ֆիսքան մը վերջին ժապաւէնին վրայ կիսնայ, այս ֆիսքանը ոլորուած բաց ֆիշի գոյնով շաբաթե կէտէ զարգարուած է, նեղ եւ սեւ թանկէլայե շրջապատած, մի եւ նոյն կրկին կէտէ զարդը օձիկին վրայ կրկնուած է, որ մեծ եւ սեւ թանկէլայե շրջապատած է, ինչպէս նաև մէջ տեղը սրածայր եղած գօտիին վրայ ալ :

Վլուայ զարդը շաբաթե բաց ֆիշի գոյն շաբաթե ոլորուած սաւառիկէ եւ ճերմակ փետուրէ կը ըլլայ :

Երկնագոյն ցատիֆէ բոյոս

Վերարկու պարնու թեւերով եւ գլխանոցով, թեւերը շատ լայն մինչև ծայրը նեղնալով կը ըմբռնայ, եւ նեղ ծայրը դէպ 'ի առջև տարած է, այս վերարկուն բոլորովին լայն սաղնագործեալ սրմայե շրջապատած է :

ԻՄԱՍՏՈՒԹԵԱՆ ՅՈՂԻ ԿԱԹԻՆԵՐ

Մարդիկ առաւել գինիի դաւաթի մէջ կ'ընկզմին քան թէ Ովկիանոսի :

Ըն որ պէտքը չեղած բաները կը գնէ, կը պարաւորի պէտք եղածը ծախել :

Հայրտութիւնը ծաղիկ մըն է որ սատանայնեւրուն պարտեզը կը բուսնի :

Մարդ մը որ հարստութիւն կը դիզէ ու չ'վալընք, կը նմանի իշոյ մը որ ոսկի կը տանի ու յարգ կ'ուտէ :

Երջանկութեան օրացոյցին մէջ, ժամը բոպէի հաշուած է, ապերջանկութեան մէջ ալ օրերու :

Ղրամը անյատակ ծով մ'է, որուն մէջ պատիւ, խիղճ եւ ճշմարտութիւն կ'ընկզմին :

Մարդիկ կը նմանին որսորդաց եղջերափողի, որչափ առաւել պղինձ ունենան, այնչափ առաւել կը լսես անոնց :

Ըտուած առանց խօսքերու սիրտը կը լսէ, բայց առանց սրտի խօսք չը լսեր :

Երեակայութեան ամենէն գէշ վտանգն ան է որ շատ անգամ իրօքը տեսնելու կ'առաջնորդէ :

Ըմենամեծ ճշմարտութիւնները ամենապարզ են, անանկ ալ ամենամեծ մարդիկները :

Ըս աշխարհիս մէջ ըրած բարեգործութեանդ հատուցումը յաւիտենականութեան մէջ կը նդուանիս, ինչպէս որ ծառի մը արմատին թափած ջուրդ պըտ-

ղին եւ ծաղիկն վրայ կ'երեւայ :

Ղաղանիքի պէս արագընթաց չ'կայ :

Մարդիկ շատ անգամ կամչնան լսելու ինչ որ իրենք չեն ամչնար գործելու :

Ըճապարելը շատ անգամ բուռն իր ոտքը կոխել կուտայ :

Փոխ առնուած հանդերձը քիչ անգամ կը յարմարի վրան :

ՉՈՒՆԵՐԱՆԻՔ

ՍԻՐՈՅ ԻՆԿԸՕ՝ ՈՒՐՈՒՆԿԸՆ ՍԻՐ

Ըյրի երկրագործ մը իր շանը սաստիկ հաշելուն համար կէս գիշերուն արթնցաւ, շանը քովը երթալուն կենդանին սաստիկ ղինքը իր հաշմունքներէն զարհուրեցուց, ուստի երկրագործը իր հրացանը կ'առնէ ու կը հետեւի շանը որ նայի թէ ինչ կայ, պատին ետին ճերմակ սաւանով պըլուած ուրուական մը կը տեսնէ, երկրագործին երեսին գոյնը կը նետէ, ու անդամները կը դողան :

“ Ես ” կը պոռայ ուրուականը “ քու մեռած կնիկդ եմ, գերեզմանէն եկայ քեզ զոռչացունելու, թէ Մարիամին հետ չի կարգուիս, որուն հետ որ սիրախօսութիւն կ'ընես կոր, միայն Հօիփօսիմէն է որ իմ տեղս պէտք է յաջորդուհի ըլլայ, կարգուիս անոր հետ, եթէ ոչ հալածանքը եւ յաւիտենական տանջանքը քու վճիռդ պիտի ըլլայ ”: Ուրուականին աս տարօրինակ առաջարկութիւնը երկրագործը զարհուրեցունելուն անզը, իր արիւթիւնը կը կենդանանայ, անմիջապէս այցելու եղող ուրուականին վրայ կը վազէ եւ սաւանը վրայէն մէկդի քաշելուն պէս՝ կը նայի որ գեղեցիկ Հօիփօսիմէն է, անոր հետ ամուսնանալու միտք կընէ, կըսուի թէ աղջիկան խորամանկութեանը վրայ զմայլելով կ'ամուսնանայ անոր հետ :

Ո՛հ, կը պոռայ խեղճ տղուն մէկը ակօսան քաշել առած ժամանակը “ երկու ակոսայ եղաւ որ սխալմամբ քաշեցիր ” — Վախ, վախ, շատ կը տրամիմ, կ'ըսէ անհոգ սափրիչը, բայց ասոնք քաշելէս առաջ ամենը երեք հատ էին, վստահ եմ որ աս անգամ չպիտի սխալիմ :

Քանի մը օր առաջ կնիկին մէկը աղնուական մը ողորմութիւն կը խնդրէ, ան ալ տասնոց մը կու տայ : “ Ի՞նչ, տասնոց մը ”, կ'ըսէ կնիկը. “ ետ առ, տէր իմ, ես ողորմութիւն խնդրեցի, տասը փարայով բան մը չեմ կրնար ընել. — Սիրելի տիկինս, կ'ըսէ աղնուականը, կ'աղաչեմ պահէ՛ աս տասնոցը ու աղքատի մը տուր ”:

Տարուք աղջկան մէկը անցեալ դիշեր Գօրեա խաղացած անտենը, իր ընկերին կ'ըսէ. "Այժմէ չես կարծեր որ քսան տարեկան եմ, ուրեմն քանի տարեկան կը կարծես": Տղան կը պատասխանէ. "Կամ ատուելէ կամ սրսկաս":

Ստակով նարտ խաղացողի մը հարցուցին թէ ի՞նչ է արհեստը, կը պատասխանէ թէ փղոսկը դարձունող է:

Հեղինակին մէկը իր ծառային կ'ըսէ. "Գըրասեղանիս վրայէն ի՞նչ է ան որ կ'այրես: — Գըրուած թուղթերը, տէր իմ, չի գրուածներուն չեմ դպչիր կոր", էր պատասխանը:

Մարդ մը ջրերուն ցրտութեանը պատճառաւ իր բաթերը տաք ջրի մէջ լողալ կուտայ. և ան նանկ բաղդը կը բանի՝ որ եռացած հակիթներ կ'ածեն: Ո՛վ կ'ըսէ թէ ասիկայ յառաջադիմութեան դար չէ:

ԼՈՒՍԵՁՅՈՒՆ ՀՄՄԿՐՈՒԹԻՒՆ

Ճորճ Բ. թողաւորը որ մը հրաման կ'ընէ իր պարտիզպանին որ Ռիչմօնտ եղած պարտեզը բացուի ամառուան եղանակին, ժողովուրդը զովանալու համար: Պարտիզպանին դժուարը դալով, որ շատ նեղութիւն պիտի ըլլայ իրեն, կը բողբէ թագաւորին որ ժողովուրդը ծաղիկները պիտի ժողուեն: Ի՞նչ, կ'ըսէ միայեալ, իմ ժողովուրդս ծաղիկ կը սիրէ, ուրեմն շատցուր տունկերը:

— Ի՞նչ է կնկան մը ամենաճշմարիտ պահանջան հրեշտակը:

— Ընտարբերութիւնն է:

Ժէօն ժանի մը ինքզինքին համար ունեցած պարտաւորութիւնը ի՞նչ է, մօրուք թողուլ, ու սղտի մատին ըզուները չ'կտրել:

ԼՈՒ ՀՄՄԿՐՍՈՒՄՆԵՒՍ

Վ. Կ. ՊՕԼԻՍ. Վ լասն զի հրատարակման վերաբերեալ ընկերիս դաշնագրութիւնները ետ մնացին:

Յ. Մ. ՊՕԼԻՍ. Ըռաջարկութեանդ պատասխանը հետեւեալ թիւերնէս մէկուն մէջ պիտի տեսնէք:

Յ. Փ. ՅՈՒՐԻԻ. Տակաւին չընդունեցինք մեր խնդրածը:

Միւնասիս Լըճիաս. Պօլիս. Ընորհակալ եմք ձեր խրատներէն:

Ռուբէն Յակոբ. Ուռլա. Կը խնդրեմք ատելի հասկանալի ըրէք հրատարակելիքնիդ:

ԾՆՈՒՆԴԻՔ

- Յուն. 4 ժամ 12 Տիկին Մէնէմէնցի Սարգսի Գասպարեան. էգ.
- " 11 " 6 Տիկին Ա. Կոնա Եսլարըզեան. արու.
- " 11 " 1 Տիկին Յովի. դոնապան գպրատան. մեռած.
- " 11 " Տիկին քրմաճը Արքա. Գրիգորեան. արու.

ԸՄՈՒՍՆՈՒԹԻՒՆՔ

Յուն. 14. Ի Սուրբ Լուսաւորիչ, ձեռամբ Տէր Յօհաննէս Բահանայի. օրիորդ Թագուհի Վարդուտեան ընդ Մանտիս Կարապետ Ե. Ագամեան:

Նշն գիշեր. Ի Սուրբ Ստեփանոս, ձեռամբ Տէր Յակոբ Բահանայի օրիորդ Մարիանա Ս. Տէր Մամթեոսեան ընդ Պարտաքի ձանիկ պալլըքեան:

Նշն գիշեր. Բարսառ թագը, ձեռամբ Տէր Ա. Կարէլ Բահանայի. օրիորդ Թագուհի Նոր Իորայէլ ֆիլիպպոսեան ընդ Պարտեքի Յովհաննէս:

Նշն գիշեր Ի Սուրբ Ստեփանոս, ձեռամբ Տէր Փիլիպպոս Բահանայի օրիորդ Գլխուհի տղղամաճի Եարութիւնեան ընդ Կարապետ շայժը Նազարէթեան:

Մ Ը Հ Ք

- Յուն. 1. Սլեմն աղա Ղծնայեան.
- " 6. Երեցիկն Տէր Յովհան Վանադեզեցոյ.
- " 14. Երբեմեան Սարգսի դուստր Մարիամ.
- " 15. Հայաճ կիլակոս.
- " 15. Մոյ օղլու հաճի Գարուստ.

Յաւերժահարմուտ գիմողներուն թիւը զոհացուցիչ է, յայտ մասին ԾՒՂԴԻԿ հանգիսին իւր վրայ ըրած բարեմաղթութիւններէն մեծապէս շնորհակալ եմք, և արդի նշաններէն կը յուսամք որ աղջային մեծ քաջալերութիւններ պիտի ստանանք յառաջադիմութեան մասին:

ՊԱՅՄԱՆՔ ՍՏՈՐԱԳՐՈՒԹԵԱՆ

Հրատարակի ամիսը երկու անգամ. ստորագրութեան անցին է. Չմիւսնիս Եսայեան Մեծարգոյ Մ. Յ. Պ. Գրիգորիս Գրատուք:

Պօշիս. Ընթերցասիրաց թանգարանք. Մեծ կոր խան, թիւ 6. Փարիզ. Ա. Մուրսուտեան:

Հանգիսիս շքանց շէք ամիս է. Չմիւսնիս հասար գին երկու արժամք մեծիս:

Պօշիս եւ ուրիշ բացաբներ. երկուք ու կէս մեծիս. Հանգիսիս վերաբերեալ որ եւ իցն նամակ գիտի ուցցուի ու Պ. Սարգիս փափագեան:

Փաստան չընտրուած նամակ չընդունուիր:

ՏՆՕՐԵՆ ԵՒ ԽՄԲԱԳԻՐ ՍԸՐԳԻՍ ՓԷՓԸՂԵԱՆ

Չ Մ Ի Ի Ռ Ն Ի Ը

Ի ՏՊԱՐԱՆԻ ՏԵՏԵԱՆ